**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք
Վազգեն Ա.Վեհափառի փողոց, հեռ. (0222) 65203, էլ.փոստ byureghavan.kotayq@mta.gov.am

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**
13 հունիսի 2016թվականի N 54 -Ա

ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2016ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 13-Ի N06(ՀԵՐԹԱԿԱՆ)ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածով՝ ավագանին որոշում է.

1. Հաստատել Բյուրեղավանի քաղաքային համայնքի ավագանու 2016 թվականի հունիսի 13-ի N 06 (հերթական) նիստի օրակարգը՝

1) Բյուրեղավանի քաղաքային համայնքի ղեկավարին կից խորհրդակցական մարմինների կազմերը հաստատելու մասին,

2) Բյուրեղավանի քաղաքային համայնքի ավագանու 2015 թվականի փետրվարի 19-ի N 14- Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կողմ – 7 Ձեռնպահ – 0 Դեմ - 0

ԱՍՈՅԱՆ ԱՎԵՏԻՔ ________

ԲԱԴԻԿՅԱՆ ԳԵՎՈՐԳ ________

ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ՀԱՅԿԱԶ________

ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ԱՐԹԻԿ________

ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ՎՈԼՈԴՅԱ________

ՇԱՌՅԱՆ ԱՐԳԱՄ________

ՕՀԱՆՅԱՆ ԱՐՄԱՆ________

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՀԱԿՈԲ ԲԱԼԱՍՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք
Վազգեն Ա.Վեհափառի փողոց, հեռ. (0222) 65203, էլ.փոստ byureghavan.kotayq@mta.gov.am

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**
13 հունիսի 2016թվականի N 55 -Ա

ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ԿԻՑ ԽՈՐՀՐԴԱԿՑԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԿԱԶՄԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ, 10.1, 54.1 հոդվածներով և հիմք ընդունելով Բյուրեղավան համայնքի ավագանու 2016 թվականի ապրիլի 14-ի N46-Ն որոշմամբ հաստատված կարգի 16-րդ կետը, հունիսի 12-իN50-Ա որոշումը, Բյուրեղավանի քաղաքային համայնքի ղեկավարի 2016 թվականի ապրիլի 25-ի N 14-Ա կարգադրությունը՝ ավագանին որոշում է.

1. Հաստատել Բյուրեղավան համայնքի ղեկավարին կից համայնքի զարգացման քառամյա ծրագրի և տարեկան բյուջեի կառավարման խորհրդակցական մարմնի ազմը՝

խորհրդակցական մարմնի նախագահ՝ Հակոբ Բալասյան, համայնքի ղեկավար
խորհրդակցական մարմնի քարտուղար՝
Լաուրա Ալեքսանյան, համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար
խորհրդակցական մարմնի անդամներ՝
Հայկազ Բաղդասարյան, ավագանու անդամ
Մերի Կարապետյան, համայնքի ղեկավարի օգնական
Ժասմենա Մնացականովա, «Արև» մանկապարտեզ նախադպրոցական ուսումնական հաստատություն համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնտեսվար,
Երջանիկ Թովմասյան, Բյուրեղավանի N2 շենքի լիազոր
Վարդանուշ Դադյան, Բյուրեղավանի N35 շենքի լիազոր
Գրետա Զաքարյան, Բյուրեղավան համայնքի բնակիչ
Լիլիթ Եղիազարյան, Բյուրեղավան համայնքի բնակիչ
Արմեն Ավագյան Բյուրեղավան համայնքի բնակիչ:

2 Հաստատել Բյուրեղավան համայնքի ղեկավարին կից քաղաքաշինության, հողօգտագործման, տնտեսական ենթակառուցվածքների, կոմունալ տնտեսության, շրջակա միջավայրի պաշտպանության և տրանսպորտի հարցերի խորհրդակցական մարմնի կազմը՝

խորհրդակցական մարմնի նախագահ՝ Հակոբ Բալասյան, համայնքի ղեկավար
խորհրդակցական մարմնի քարտուղար՝ Լաուրա Ալեքսանյան, համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար
խորհրդակցական մարմնի անդամներ՝

Ավետիք Ասոյան, ավագանու անդամ
Բորիկ Դավթյան, համայնքի ղեկավարի խորհրդական,
Հայկ Եղյան, «Բարեկարգում և կանաչապատում» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրեն

Լյովա Հարությունյան, «Բյուրեղ Ալկո» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության տնօրեն
Արգամ Շառյան, «Բյուրեղավան» համատիրության նախագահ,
Լյուբով Պիր – Բուդաղյան, Բյուրեղավանի 1-ին թաղամասի լիազոր
Մարիետա Թումանյան, Բյուրեղավան համայնքի բնակիչ
Արել Իսրայելյան, Բյուրեղավան համայնքի բնակիչ:

3. Հաստատել Բյուրեղավան համայնքի ղեկավարին կից կրթության, մշակույթի, երիտասարդության հետ տարվող աշխատանքների, առողջապահության, սպորտի, սոցիալական, երեխաների պաշտպանության) հարցերի խորհրդակցական մարմնի կազմը՝

խորհրդակցական մարմնի նախագահ՝ Հակոբ Բալասյան, համայնքի ղեկավար
խորհրդակցական մարմնի քարտուղար՝ Լաուրա Ալեքսանյան, համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար
խորհրդակցական մարմնի անդամներ՝
Գևորգ Բադիկյան, Բյուրեղավան համայնքի ավագանու անդամ
Նվարդ Ալավերդյան,համայնքապետարանի աշխատակազմի առաջին կարգի մասնագետ,
Էգդար Հարությունյան, «Բյուրեղավանի արվեստի դպրոց» արտադպրոցական ուսումնական հաստատություն համայնքային ոչ առևտրային կազմակերպության դասատու
Վաչագան Հովհաննիսյան, Բյուրեղավան համայնքի բնակիչ
Սուսաննա Միրոյան, Բյուրեղավան համայնքի բնակիչ
Եղիշ Պողոսյան, Բյուրեղավան համայնքի բնակիչ
Հարություն Ծատուրյան, Բյուրեղավան համայնքի բնակիչ:

4.Սահմանել, որ համայնքի ղեկավարի բացակայության ժամանակ խորհրդակցական մարմինների նախագահի գործառույթներն իրականացնում է համայնքի ղեկավարի տեղակալը:

5.Սահմանել, որ սույն որոշմամբ ձևավորված խորհրդակցական մարմինները գործելու են մինչև համայնքի ղեկավարի պաշտոնավարման ժամկետի ավարտը:

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կողմ – 7 Ձեռնպահ – 0 Դեմ - 0

ԱՍՈՅԱՆ ԱՎԵՏԻՔ ____________

ԲԱԴԻԿՅԱՆ ԳԵՎՈՐԳ ____________

ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ՀԱՅԿԱԶ____________

ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ԱՐԹԻԿ____________

ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ՎՈԼՈԴՅԱ____________

ՇԱՌՅԱՆ ԱՐԳԱՄ____________

ՕՀԱՆՅԱՆ ԱՐՄԱՆ____________

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՀԱԿՈԲ ԲԱԼԱՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք
Վազգեն Ա.Վեհափառի փողոց, հեռ. (0222) 65203, էլ.փոստ byureghavan.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

13 հունիսի 2016թվականի N 56 -Ա

## ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 19-Ի N 14-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով՝ ավագանին որոշում է.

1.Բյուրեղավան համայնքի ավագանու 2015թվականի փետրվարի 19-ի «Բյուրեղավանի քաղաքային համայնքի ղեկավարի կամավոր լիազորությունների իրականացման և դրանց համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների տրամադրման կարգը հաստատելու մասին» N 14 - Ա որոշման մեջ կատարել փոփոխություն՝ որոշմամբ հաստատված հավելվածի 14-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ՝

«14. Հատկացվող մեկանգամյա սոցիալական օգնության առավելագույն չափը սահմանվում է 100000 (մեկ հարյուր հազար) դրամ: Նույն ընտանիքին տարվա մեջ սոցիալական օգնություն կարող է հատկացվել 200000(երկու հարյուր հազար)դրամ :» :

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կողմ – 7 Ձեռնպահ – 0 Դեմ - 0

ԱՍՈՅԱՆ ԱՎԵՏԻՔ ____________

ԲԱԴԻԿՅԱՆ ԳԵՎՈՐԳ ____________

ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ՀԱՅԿԱԶ ____________

ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ԱՐԹԻԿ ____________

ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ՎՈԼՈԴՅԱ ____________

ՇԱՌՅԱՆ ԱՐԳԱՄ ____________

ՕՀԱՆՅԱՆ ԱՐՄԱՆ ____________

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀԱԿՈԲ ԲԱԼԱՍՅԱՆ